

Այսպիսի քայլ մը աննչու ատեն, Հայաստանէն աւելի հաշուի պէտք էր առնուէր մեծ Ռուսաստանի արամադրութիւնը: Եթէ Ռուսաստան հակառակ ըլլար նման քայլի մը, իբրեւ նախկին իրաւատէր, հազիւ թէ քեմալական թուրքիան համարձակութիւն ունենար, իրերու այդ վիճակին մէջ քաղաքական դոնքիչոտութիւն մը փորձելու: Ուրեմն, Ռուսաստանի համաձայնութիւնը ստացուած պէտք էր ըլլալ նախ քան այդ քայլին առնուելը:

Միւս կողմէն՝ սակայն, Հայաստանի կառավարութիւնը՝ տեղեակ կամ անտեղեակ էնկիւրիի եւ Մոսկուայի միջեւ գոյութիւն ունեցող թաքուն եւ դաւադիր հասկացողութիւններուն, իրերու բերմամբ ստեղծուած վիճակի հետեւանքով, նախ քան նոր դաշնագրի մը ըստօրագրութիւնը, ինքզինք կը համարէր նախապատերազմեան սահմաններէն ներս գտնուող հողերու միակ իրաւատէրը եւ այդ հողերու վրայ կատարուած քաղաքական կամ զինուորական գործողութիւնները կը համարուէին իր ներքին գործերը, որուն համար ոչ ոքի հաշիւ տալու պարտաւորութիւն ունէր:

Հող էր որ կնճիռը կը ստեղծուէր: Թուրքիա թաքուն պատճառներ ունէր այդ հողերը իրը համարելու. իսկ Հայաստան՝ քաղաքական օրուան տուեալներուն վրայ յենուած՝ իր օրինաւոր իրաւունքները կը կիրարկէր, ու այս երկու տարբեր միտումները ինքն ըստ ինքեան իրար պիտի բախէին:

Ասոր հետեւանքը կ'ըլլար այն, որ Հայաստանի կառավարութեան մտքէն անգամ չէր անցնէր, թէ իր մէկ դաւառին՝ Օլթիի մէջ քաղաքական վարչութիւն հաստատելը էնկիւրիի կողմէն պիտի նկատուէր, «Օլթիի մէջ կազմուած տեղական թուրք վարչութեան գէմ յարձակում հայերու կողմէն», որը իրաւունք տար թուրքերուն զայն պատերազմի պատճառ համարելու: Ոչ ալ Մերտէնէկի ամխահանքերու Հայաստանի կողմէն շահագործելու փորձը պիտի համարուէր թուրքերու իրաւունքներուն գէմ յարձակում մը:

Ահա՛ այս պարագաներն են, որ Մուսթաֆա Քեմալ նկատած է Հայաստանը պատերազմի պատճառ տուող եւ նախաշարժակ, իսկ Հայաստան կը նկատէր բոլորովին արդարացի

կերպով թրքական դաւադիր յարձակում մը Հայաստանի նորակազմ պետութեան գէմ, որուն դադանի ծալքերը կը գտնուէին համաթուրանական ծրագիրներուն մէջ եւ որուն ուղղակի մեղսակից հանդիսացած էր Սորհրդային իշխանութիւնը, քաղաքական այլ մըստածումներով:

Եթէ քիչ մը մթին պատմութեան մէջ մըտնենք, այն ատեն շատ յստակ կերպով երեւան պիտի դայ, որ Մուսթաֆա Քեմալ եւ իր ընկերները կը թաղցնէն իրենց դաւադրական քայլերը, որ շատ առաջ սկսած է, քան այն երեւոյթները, որոնք պատերազմի պատճառ կը համարեն, եւ որ, առանց ունէ նման պատճառի ալ Հայաստանի վրայ յարձակելու ծրագրերը արդէն կը որոշային էնկիւրիի մէջ:

* * *

Թէ ինչպէս Իթթիհատի փախստական ղեկավարները եւ Սորհրդային գործիչները բանակցութիւններ սկսեցին եւ վերջ ի վերջոյ յանգեցան միլլի թուրքիոյ եւ Սորհրդային Ռուսաստանի զաղանի զինակցութեան մը, ասիկա այս նիւթէն դուրս է եւ այդ մասին չպիտի խօսիմ, այլ պիտի խօսիմ միայն այն պարագաներու մասին, որոնք հետեւանք էին նոյն զինակցութեան պայմաններուն եւ որոնց եւ մօտէն ծանօթութիւն ունեցած եմ իր ատենին:

Այն միջոցին, երբ ամբողջ հայ ժողովուրդը կ'ազդէր խանդավառ օրեր, աչքերն ուղղած դէպի եւրոպական Դաշնակից Սորհրդաժողովները, որտեղէն կը սպասէր իր դատի վերջնական կարգադրութիւնը, չէր զիտեր, թէ ինչ դաւերու ցանց մը կը կազմուէր իր շուրջը, մութին մէջ:

1920 թուականի ապրիլ ամսու ընթացքին, օր մը, գործով կ'երթամ անդլիական Պոլսոյ զբաւման բանակի կեդրոնը: Դիպուածօրէն կը հանդիպիմ հետախուզական բաժնի պատասխանատու սպաներէն հաղարապետ Ի . . .-ի, որ կը յայտնէ ինձի, թէ կ'ուզէր արդէն ինձի հետ խօսիլ լուրջ խնդրոյ մը մասին, որը շատ կը շահագրգռէ հայ ժողովուրդը:

Առանց ժամանակ կորսնցնելու դացի իր դրասենեակը: Ինձի յայտնեց, թէ դադանի զինակցութիւն մը կազմուած է Միլլի թուրքիոյ եւ Սորհրդային Ռուսաստանի կառավար-